

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

ԽՍՐԱԳԻՐ—ՏԵՕՐԷՆ

ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. Շրջան

1900 Մայիս 20

Թիւ 96 — ԽԳ

هانراکيداق غزنه

HANRAKIDAGUE

Journal Arménien Encyclopédique

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան Պոլսոյ համար 50 Դր. .
Գաւառաց համար 60 ,
Արսասահման 15 Ֆր.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դոցօք (Վիգբոր Հիւկօ)
Տեա՛ն եւ գործ Սահակաբժուքիւն
Բնութիւնն ու Կինը (Բերբուււմ)
Տալիոցը
Իմաստասիրական բառարան
Գիտական Բրոնիկ
Մօրս արցունքը (Բերբուււմ)
Արեւամուտ (Բերբուււմ)
Ներկագործութիւն
Ժիծաղ

Թ. ԼԱՊՃԻՆՃԵԱՆ
Մ.
Մ. ԹԱՊԱԳԵԱՆ
ՍՍԱԿԱՆ ՎՐԴ.
Ա. Լ.
ՔՐԻՍՏԱՆՈՅՇ
ՍՍԱԿԱՆ ՎՐԴ.
Մ. Յ. ԹՈՒՐԵԱՆ
Բ. Պ.
Ս.

40 փարսա 40

ԳՈՐԾԱԿԱԼ ՈՒԹԻՒՆ.—Անոնք որ կը փափաքին բաժանորդ գրուիլ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ, կըրնան ուղղակի գլխիւ իմբագրութեանս, կամ Հանդէսի Պատ. Գործակալներուն, որոնց միջոցաւ կ'ընդունին իրենց թերթերը.

Նիկոմիդիա.—Մեծ. Ներսէս էֆ. Խաչատուրեան Սամսոն.— Մեծ. Մանուէլ էֆ. Տիւլպերեան
Պարտիզակ.— « Մելքոն էֆ. Յովսէփեան Մարգարէ.— « Աւետիս էֆ. Կ. Կիւլպէնկեան
Ատաբազար.— « Ստեփան էֆ. Սափրիչեան Ատանա.— « Յակոբ էֆ. Խաչատուրեան
Երզնկա.— « Գառնիկ էֆ. Ճիզմէճեան Իզմիր.— « Կարապետ էֆ. Մալէճանեան

ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Էսկի Ջապսիե նասսէսի Թիւ 61

1900

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ջ Ա Ր Դ
Գործնական եւ Արհեստական
Ի Ր Ա Գ Ի Տ Ո Ի Թ Ի Ի Ն

Յօրինեց. — Կ. Ս. ՏԵՄԻՐԵԱՆ

Գին 3 Ղրուշ

Ինչպէս անունը ցոյց կուտայ, Տէմիրեան էֆ.ի սոյն աշխատասիրութիւնը կը խօսի կենդանային, բուսային ու հանքային արտադրութեանց եւ ճարտարարուեստներու մէջ անոնց կիրառութեան վրայ, մանկական մտքին դիւրամատչելի, յըստակ ու պայծառ բացատրութիւններով, Այս դործ, որ պատկերազարդ ըլլալու առաւելութիւնն ալ ունի, մեր նախակրթարաններուն մէկ անհրաժեշտ պէտքը կը լրացնէ, եւ իբր այն՝ արժանի է քաջալերութեան:

Է Ք Ի Թ Ա Պ Լ

(ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ)

ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏ ԵՒ ԱՄԵՆԷՆ ՀՁՕՐ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ԵՐԱՇԽԱՆՈՒԹԻՒՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԹ **ՄԷԿ ՄԻԼԻԱՌ 451** ՄԻԼԻՈՆ ԶՐԱՆՔ



1898ին՝ ԷՔԻԹԱՊԼ իր ապահովագրեալներուն բաժնած է աւելի քան 153/4 ՄԻԼԻՈՆ ֆրանք շահաբաժին

(Այսինքն նոյն տարւոյ մէջ ֆրանսական ՄԻԱՅԵԱԼ 17 ընկերութեանց բաժնած շահերու համագումարին գրեթէ կրկնը):

Ախարհիս մէջ գտնուող ոչ մէկ ընկերութիւն

ԷՔԻԹԱՊԼի չափ գործառնութիւն ունի

ԷՔԻԹԱՊԼի չափ պահեստի դրամ ունի

ԷՔԻԹԱՊԼի չափ շահաբաժին կը վճարէ

Հետեւաբար ոչ մէկ ընկերութիւն կրնայ աւելի ԱժԱՆ եւ աւելի ՇԱՀԱԻՏ ընծայել կեանքի ապահովագրութիւնը՝ որքան ԷՔԻԹԱՊԼ:

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՍԵՂԱՆԱՌՔ

Լոնտոն

Անգղիոյ պանքա

Բարիզ եւ Կ. Պոլիս, Գրէտի Լիոնէ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ ԹՈՒՐԲՈՑ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

Կ. Պոլիս, Պաճէ Գաբու, Անանիատի խան

Պատկերազարդ Աշխարհագրութիւն

Պ Օ Ջ Ա Ճ Ե Ա Ն

Գին 4 ղրուշ

Լոյս տեսաւ Ն. Պեպկեան մախուր տպագրութեամբ, քաղ. վերջին փոփոխութեանց եւ Կրթական ծրագրին համաձայն: Մայրաքաղաքիս ե՛ն կարեւոր դպրոցներն անմիջապէս ընդունեցին զայն իրենց դասագրոց ցանկին մէջ:

Փնտեցեմք 1900ի տպագրուածը, որ 208 էջերէ կը բաղկանայ, եւ իր պարունակած պատկերներով, գիտական, առեւտրական եւ ցեղային ծանօթութիւններով, աշխարհագրութեան Ա. դասագիրքը կը հանդիսանայ եւ արժանի է ամեն ուսուցչի ուսուցչութեան:

Հանրագիտակի Տնօրէնութիւնը կը հայրապէ մեծաքանակ 30 առ 100 զեղչով:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

ԽՄԲԱԳԻՐ - ՏՆՕՐԷՆ

ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. Շրջան

1900 Մայիս 20

Թիւ 96 — ԽԳ

Դ Օ Դ Օ Շ Ը



ՆՉ գիտենք մենք, ո՞վ է այն որ իրերու խորը կըրնայ խափանցել։ Արեւմուտքը վարդ ամպերու մէջ կը հաճանչէր։ Գոյնաւորութեան օրումն մը իրիկունն էր ուր զորիզոնը իր հրաբորրոք վառարանին մէջ բոցի կը վերածէր թօնընկէցը։

Անուահետի մը մօտ, անձրիւէն գոյացած ճահիճի մը եզրը՝ դօդօշ մը շլմորած՝ երկինքը կը դիտէր ու կը մնար լուրջ ու խոհուն։

Սոսկալին հիացմամբ կը նայէր Շքեղութեան։

(Ա՛խ, ինչո՞ւ տառապանքն ու ինչո՞ւ տգեղութիւնը։ Տիեզերք, ափսո՛ս, լի է հակադրութիւններով, յանցապարտ մարդերով, շարաւոտ գորտերով, ծաղկաւէտ մարդերով ալ, արեւոտ եթերով ալ)։

Կարմրագոյն ծառերու մէջ տերեւները կը ծիրաներփնուէին։ անուահետին մէջ ջուրը խոտով խոնուած՝ կը ցոլցըլար։ Իրիկունը սաւանի մը պէս ծալ ծալ կը պարզուէր, մինչ տարածամող օրումն մէջ թռչունը հրթալով կը կամայցունէր իր ձայնը։ Օգին

մէջ, ջուրին վրայ ամէն ինչ կ'անդորրէր։

Ու, մոռացումով գեղուն, դօդօշը՝ անայայլ, առանց ամօթի ե ցասումի, հեշտի՛ւ կը դիտէր յաղթ բոլորչին արիային։ Անիծեալը թերեւ օրհնուած կ'զգար ինքզինքը։ Չիկայ անասուն մը որ յաւիտենականութեան ցոլացումը չունենայ, չիկայ բիրտ մը, ըլլայ թող ան անարգ, խոտան, որուն չի հանդիպի վերի փայլակն, երբեմն դուրձագին, երբեմն վայրագ։ չի կայ հրէշ մը, տխեղծ, չիլ, աղտոտ, ճպոտոտ, որ չըմբռնէ իր աչքերուն մէջ անբաւութիւնը աստղերուն։

Հոնկէց անցնող մարդ մը տեսաւ ժանտատետիլ կենդանին, ու պժգանքով կրուկի հարուած մը փակցուց անոր գլխուն։ Տէրտէր մըն էր ան, ձեռքը զիրք մը՝ կարդալու զբաղած։ Յետոյ կին մը եկաւ, չփակին ծաղիկ մը խոթած՝ ու անոր աչքը պայթեցուց հովանոցին ծայրովը։

Ալեւոր էր տէրտէրը, կինն ալ աղուոր։

Չորս դպրոցականներ եկան, երկինքին պէս պայծառ։

— Տղայ էի, պզտիկ էի, անգո՞ւթ էի։

Աշխարհի վրայ ուր հոգին կը թափառի

ծառայական՝ ամէն ոք այսպէ՛ս կրնայ սկսիլ իր կեանքի պատմութիւնը: Ան իր խաղը՝ գինովութիւնն ու ա՛յգը ունի իր աշուրնեաներուն մէջ, իր մայրի՛կը ունի ան: Զուարթ դպրոցականն է անիկա, օդը լայնաթոք շնչող, սիրուած, ազատ, գոհունակ ատ մի-նինիկ մարդը ցնծուն՝ ի՞նչ կրնայ ընել՝ երջանիկ արարած մը խոշտանգելէ զատ:

Դօդօշը կը քաշլուտուէր ամայի ճամբուն խորը:

Այս ան պահն էր ուր դաշտերու խորութիւնները կը հեռակապուտին: Ինք շիկագոյն ըլլալուն՝ գիշերը կ'ըզձար: Տղաքը նշմարեցին զայն ու պոռացին:

— Սատկեցունե՛նք սա աղտոտ անասունը. և որովհետեւ չափազանց տգեղ է, չար-չորկե՛նք զինքը:

Եւ ահա ամէնքնին մէկ խնդալէն (տղան կը խնդայ երբոր մեռցունէ) սկսան մշտել սրածայր ճիւղով մը, անոր ճաթած աչքին ծայրը բանալով, խոցերը վորփշտկելով եւ ըրածնուն վրայ հիանալով, մինչ անդին անցորդներ կը ծափծափէին զիրենք ու կը խնդային: Ու շիրմային ստուեր մը կը պատանգէր այս սև մարտիրոսը որ ճիկ մը հանելու իսկ անկարող էր ալ: Եւ արիւնը, արիւնը սոսկալի կը վաղէր ամէն դիէն այս խեղճ էակին որ իբր ոճիկ՝ իր տգեղութիւնն ունէր իր վրայ:

Կը փախէր, ոտքին մէկը խլուած էր: Տղուն մէկը զարկաւ անոր՝ բերանը աւրուած թիով մը. և ամէն հարուած կը փրփրացնէր զինքն, ճիշտ այն տարագիրին պէս, որ, նոյն իսկ օրը իր գլխուն վրայ ժպտած ատենն ու լա՛յն երկինքին տակ՝ գետնափորէ մը ներս պիտի սողար:

Տղաքը կ'ըսէին, «ի՛նչ անպիտան է, չո՛ղիք կը վազցունէ կոր»:

Ճակատը կ'արունէր, աչքը կը կախուէր: Կենիստային ու մրտենիին մէջ անանկ վիճակով մը կը քալէր որ նայողին սիրտը կը խշխշար: Կարծես թէ ահաւոր ճիրանի մը տակէն դուրս կ'ելլէր:

Օ՛հ, ո՛րչափ սև բան է թշուառութիւնը սաստկացնելը, տճեւութեան վրայ սոսկո՛ւմն ալ աւելցնելը...

Անդամները խախտած, մէկ քարէն միւսը

ցատկելէն դեռ ևս կը շնչէ՛ր ան, անապատան կը սողա՛ր ան: Ըսուեցաւ նաև թէ դժուարահաճ մահը այնչափ գարշելի կը գտնար զինքը որ կը մերժէր:

Տղաքն ուղեցին խելդակապի մը մէջ բռնել վայն, բայց իրենցմէ խուսափեցաւ ան՝ դէպի ցանկերուն երկայնքը սահելով: Անիւի հետքը բաց էր, հո՛ն քաշկռտեց իր վերքերն ու նե՛րս խոթուեցաւ արիւնոտ, ջախջախ, գանկը բացնած, պաղշիւ մը ըզգալով այդ կանանչ կոյանոցին մէջ, այդ ջիջխանքին մէջ մարդուն հետաքրքրութիւնը լուսւով:

Երբե՛ք այսչափ զուարճացած չունէին ատ՝ գարունը այտերնուն, խարտեալ սիրուն տղաքը. ամէնքն ալ մէկ բերան կը խօսէին ու մեծէն մինչեւ փոքրը կը պոռչտար, «եկուր նայէ, Ատողի, և դուն, Պետրոս, երթանք խոշոր քար մը առնենք, գործը լմնցունենք»:

Բոլորը մէկ յառեցին իրենց նայուածքը բախտէն նզովեալ այս էակին վրայ: Յուսահատը կը տեսնար այդ սոսկալի ճակատները որ իրեն վրայ կը ծռէին:

(Բէ՛հ, նպատակ ունենանք, չէ թէ նպատակակէտ: Երբոր նայինք մարդկային հորիզոնէն կէտի մը, ձեռուներս կեանքն ունենանք, չէ թէ մահը):

Ամէն աչք ցիւխին մէջի դօդօշը կը հալածէր: Ունեց համար կատուութիւն, ուրիշներու համար ալ յափշտակում ըսել էր ատ բանը:

Տղաքներէն մին եկաւ հետը քար մը բերած, ծանրութեանը նայելով, իրաւցունէ ծանր, բայց ծայրը չարութիւն ըլլալուն դիւրաւ վերցուած, ու ըսաւ. «Նայինք հիմայ ի՞նչ գործ տեսնայ պիտի սավիկա»:

Բայց նոյն բոպէին. ճիշտ ատ տեղը, բախտը կը բերէր շատ ծանր բեռով սալ մը զոր կաղնի կաղը կը քաշէր խռճած էշ մը, նիհար ու խուլ, էշը սաստիկ յոգնած, կաղ ու ցաւազին՝ լման օր մը քալելէ յետոյ ախոռին կը մօտենար, կը թաւալեցնէր սայլակն ու կոշով մը կը կրէր. առած խրաքանջիւր քայլը կը կարծուէր վերջնութեան

ըլլալ : Այս անասունը կը քալէր ծեծ ուտե-
լէն հիւծեկոծ, մինչ իր գոլորշիով սքողուն
ականողիքը անանկ ապուշութիւն մը կը
պահէին որ թերեւս թմրութիւնն է :

Անուահետը խռոչուտ էր, ցեխով ալ
ա՛յնքան լեցուած ու անա՛նկ դժնէ զառի-
վերով մը որ անխի անձնիւր շրջանէն տը-
խուր ու խապոտ ձայն մը կը խլէր : Ու էչը
կ'երթար հեծկտագին, իշավարին հայհոյե-
լով : Ուղիւն կը խոնարհէր և իշուկը ետ կը
մղէր . էչը, կոյր հնազանդող, խորազանին,
բիրին տակ ա՛յն տեսակ խորունկ կերպով
մը կը մտածէր զոր մարդ չի կրնար :

Տղաքը լսելով այս անխիւն և այս քալ-
ուածքին աղմուկը, պոռպուտով ետինին
դարձան ու սայլակը նշմարեցին : — «Բարը
մի՛ ձգեք դողօշին վրայ, կայնէ՛, գոչեցին,
նայէ՛, սա իջնող կառքը վրայէն անցնի պի-
տի հիմայ, ասիկա շատ աւելի զբօսուցիչ է» :

Ամէնքը կը դիտէին :

Յանկարծ, դէպի անուահետը գալով ուր
հրէշը իր յետին տանջանքին կ'սպասէր, էչը
տեսաւ զօդօշը, ու, ախուր, — ախսո՛ս,
աւելի՛ ախուրի մը վրայ ծռած, — ծանրան-
դամ, խորտակուած, թախծոտ ու մորթա-
գերծ, կը թուէր հոտուըտալ զայն իր հա-
կած գլխովն :

Այս թիապարտը, այս ոճրագործը, այս
երկայնամիտը գթա՛ց վրան. ժողովեց իր
սպառած ուժը և պրկելով չղթան ու պա-
խուրցը իր արիւնահոս գնդերներուն վրայ,
դիմապրութիւն ընելով իշապանին որ իրեն
սի՛ն... կը պոռչըտար, նուաճելով բռնին
անտանելի մեղսակցութիւնը, իր տաժան-
քով մրցումը վրան առնելով, սայլակը քա-
շելով ու համեալ չալկած, մոլորագին աչ-
քերով ճամբան չեղեց անիկա անողոք անի-
ւին, որպէս զի ողջ մնայ իր ետեւ եղկելի
անասունը :

Յետոյ վերսկսաւ իր ճամբան՝ մորակի
հարուածի մը վրայ :

Ան ատեն, տղաքներէն մէկը, — հիմա
այս պատմութիւնը ընողը, — քարը ձեռքէն
ձգելով, անհուն կամարին տակ որ մերթ-
կապոյտ ու մերթ սեւ է, լսեց ձայն մը ո

կ'ըսէր իրեն. «Բարի՛ եղիր...» :

Տխմարէն բարութի՛ւն, ածուխէն աղա-
մա՛նդ, սո՛ւրբ առեղծուած, խաւարէն վե-
հաշող լո՛յս : Ասուն երկրայինները աւելի
բան մը չունին անասուն երկայիններէն :
Այս վերջինները, որ կոյր ու սլատուհա-
ուած վոհմակ մըն են, ո՛րչափ աւելի կը
մտածեն, ու, Հրճուանքը չունենալուն,
ո՛րչափ աւելի Գո՛ւթը կ'ունենան :

Ո՛վ տեսիլ նուիրական, ստուերը որ
ստուերին օգնութեան կը փութայ, տըխ-
մարը որ կը խանդաղատի եւ որ կը ծռի տես-
քը ժանտ էակին վրայ, բարի գեհնապար-
տը որ պատճառ կ'ըլլայ անպիտան ընտ-
րեալին անըջանքին, անասունը որ կը մօտե-
նայ, մինչ մարդը յետս կ'ընկրկի, կ'ան-
գթանայ : Տմոյն վերջալոյսի պայծառու-
թեանը մէջ գրաստը մերթ ընդ մերթ կը
խորհի և կ'զգայ թէ ինք քոյր է խորհրդա-
ւոր ու խորին հեզութեան : Կը բաւէ որ
չնորհքի փայլակ մը կածկտայ իր ներսը, և
ահա ան հաւասար կը դառնայ յաւիտենա-
կան լուսաւորին : Էչը, որ, իրկնամուտին՝
չափազանցօրէն բռնաւորուած, պարտա-
տուն, օրհասական, զգալով արիւնիլը իր
տափակ սմրակներուն, քանի մը քայլ ա-
ւելի կ'առնէ, ճա՛մբէն կը չեղի եւ անհան-
գիստ կ'ըլլայ՝ չի ջախջախելու համար ջրի-
ջիւանքին մէջ գտնուող դօդօշ մը :

Այս անարգ ու աղտոտ կենդանին, գա-
նալիւծ ու մէն մարմինը կապուտ կապուտ, ա-
ւելի սուրբ է քան Սոկրատ ու աւելի մե՛ծ
քան Պլատոն :

Կը հետազօտե՞ս, ո՛վ փրկիստիայ, և դուն
ո՛վ մտածող, կը խոկա՞ս, մեր անիծեալ մա-
ռախուղներուն տակ կ'ըզճա՞ս ճշմարիտը
գտնել : Ան որ բարի է՝ միթիւն քաղուղիին
մէջ պայծառ կը տեսնէ : Այն որ բարի է՝
երկինքէն կտորիկ մը կ'զգենու : Ո՛վ իմաս-
տուն, բարութիւնը որ զաշխարհ կը լուսա-
յորդէ, բարութիւնը՝ ազատածին առտուան
այդ անխարկը, անձանթը ջեռուցանող այդ
ճաճանչը, դիչերէն ու տառապանքէն ախոր-
ժող այդ ընազդու՛մը՝ գերագոյն և աճառ
զօդագի՛ծն է որ, ախսո՛ս, այնքան սզա-
տիւր յաճախ, մութին մէջ մեծ անբանը,
էչը, կը միացնէ Աստուծոյ, մեծ Գիտունին :

Պէրպէրեանի դասերէն
Խ. ԱՊԱՆԵՃՅԱՆ

Վ.ԻԲԹԹԻ ՀԻԿԻԾ

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԻՄԱՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Բ.

ՀՈԴԻՆ ԵՒ ԻՄԱՑԱԿԱՆ ԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ

1. ԸՄԲՈՆՈՒՄ (Perception)

(Շարունակութիւն ԻԲ քիւէն)

Անցնինք հիմա ըմբռնման կարողութիւնը մշակելու խնդրոյն: Արդէն խօսեցանք զգայարանաց դաստիարակութեան վրայ, որք արտաքին ըմբռնման գործիքներն են: Ուստի պիտի չկրկնենք ինչ որ ըսած ենք արդէն, բայց անգամ մ'ալ դիտել պիտի տանք թէ Ֆիզիքական դաստիարակութիւնը մեծ ազդեցութիւն ունի իմացական դաստիարակութեան վրայ:

1. Մարմնոյ կապերուն մէջ կաշկանդ-

ԵԱՆՕԹ. Ներքին ըմբռնման վերաբերող գաղափարները, իրենց ծագման ու իրենց առարկային համեմատ, կը բաժնուին երկու տեսակի, զոր օգտակար է ցոյց տալ. 1. Այն գաղափարներն որոնց առարկան է մեր հոգեկան բնութիւնը, ինչպէս հոգին, իր կարողութիւնները, իր գործերը, Ներքին զգայարանքի կամ զիտակցութեան (Conscience) օժանդակութեամբ կ'ըմբռնենք զանոնք: 2. Այն գաղափարներն որք առնչութիւն ունին մեր ֆիզիքական բնութեան, մեր անձէն դուրս եւ վեր եղող բաներու հետ, այսինքն Աստուած, իր ստորոգելիք, արդարութիւնը, պարտականութիւնը, առաքինութիւնը, բարին, գեղեցիկը, ճշմարիտը, պատճառի, ոյժի գաղափարը եւ այն: Բանիկն [Բանավարութիւն, Raison] օգնութեամբ կ'ըմբռնենք զանոնք. ահա այս գաղափարները կը կոչուին նախնական, անկրթաճշտ, վասն զի անոնք հոգեկան են մարդու համար, փորձառութեան հիմնականներն [donnée] գերիկեր են, եւ առնչութիւն ունին իշն հետ: Միւս գաղափարներն, ընդհակառակն, կամ Ներքին Զգայարանքին եւ կամ Արտաքին Ըմբռնման միջոցաւ կը հայթայթուին մեզ, փորձառութենէ կուգան մեզ եւ առնչութիւն ունին մարդու ֆիզիքական բնութեան հետ. ասոնք պատահական կամ փորձառական գաղափարներ կը կոչուին [idées contingentes, idées expérimentales]: Նախնական եւ անհրաժեշտ գաղափարներն ու պատահական գաղափարները՝ նախնական ու անհրաժեշտ ճշմարտութեանց եւ պատահական ճշմարտութեանց անձնիւր տարրերն են, որոնց վրայ պիտի խօսինք ապա:

ուած, մեր հոգին միշտ կարօտ է անոր օժանդակութեան, գործակցութեան: Մեր ֆիզիքական բնութեան պայմանն է այս, զոր պարտինք մեծապէս ի հաշիւ առնել գործնական դաստիարակութեան մէջ: Ամէն ոք դիտած է թէ զուտ հոգեկան գաղափարները մեր իմացականութեան դժուարամատչելի բան մը ունին միշտ. այսպէս չեն սակայն այն գաղափարներն որք արտաքին բնութենէն կուգան մեզ. հոս զգայարանքները կ'օգնեն մեզ, և ըմբռնումն աւելի յստակ և աւելի դիւրին է: Տղան մանաւանդ, որոյ փորձառութիւնը դրեթէ բոլորովին նիւթական է, և որոյ միտքը դրեթէ բաց ուած է լոկ ֆիզիքական աշխարհի վրայ ուր միակ կը շահագրգռէ զինքը, տղան դժուարաւ կ'ըմբռնէ աննիւթական աշխարհի գաղափարները: Անտարակոյս կանուխէն պէտք է զայն պատրաստել այդ ծանօթութիւններն ըմբռնելու, բայց յամրաբար և աստիճանաբար: Ուստի, դպրոցին մէջ իր բնականութեան առաջին շրջանին մէջ պէտք է մանուկը զբաղեցնել մանաւանդ այն գաղափարներով և իրողութիւններով որք կը վերաբերին իր մարմնոյն, իր գործարաններուն, ֆիզիքական բնութեան և այն նիւթական առարկաներուն որք իր ձեռքին տակ կը գտնուին. զխաւորաբար այս կէտերուն վրայ թաւալելու են մտամարդական փոքրիկ հրահանգներն ու վարժութիւնները, կամ խաղիսակսն դասերը, — որոնց վրայ պիտի խօսինք ապա, — քերականական կարճ օրինակները, զրավարժութեան առաջին օրինակները, թուարանական փոքրիկ խնդիրները, թէ՛ մոռուոր և թէ՛ գրաւոր:

2. Երբ խնդիրն այս կարգի ֆիզիքական ծանօթութիւններն տղայոց տալու վրայ է, փոխանակ առարկաները նկարագրելու և անուղղապէս միայն ծանօթացնելու, ջանացէք որ անոնց գաղափարը կամ ծանօթութիւնը մտցունէք զգայարանքներու դռնէն, և մանաւանդ գործածեցէք տեսողութիւնը, որ ամէնէն յստակ գաղափարները կուտայ: Օր. համար, ձայն մը ճանչցնել կ'ուզէք. փոխանակ անոր վրայ երկարօրէն խօսելու, այդ ձայնը լսելի ըրէք սուղոյց: Խորտու-

բորդ կամ ողորկ առարկայ մը ծանօթացնել կ'ուզէք, չօչափել տուէք զանոնք. ճիշդ մը կամ գոյն մը ճանչցնել կ'ուզէք, ցոյց տուէք, զանոնք և մինչեւ իսկ, եթէ կարելի է, առարկայ մը ծանօթացուցէք ա'յն ամէն զգայարանքներու միջոցաւ, որոնց տակ կըրնայ իյնալ, և այն ատեն մանուկը լաւ եւս պիտի ըմբռնէ և ճանչնայ զայն: Օրինակի համար, աշխարհագրութեան դասին մէջ, եթէ աշակերտներուն ըսէք (ինչպէս սովորաբար կ'ըսեն) «Երկիրս կլոր է», հաւանական է որ տղայք երեւակայեն զայն կլոր ափսէի մը և կամ սկաւառակի մը պէս: Սակայն եթէ գնտակ մը ցոյց տալով ըսէք անոնց. «Ահա երկրիս ձեւը, թէպէտ ան անհունապէս աւելի մեծ է», այն ատեն տղայք առաջին անգամէն կատարելապէս ճիշտ գաղափար մը պիտի կազմեն երկրիս կլորութեան վրայ, և այս գաղափարն այլեւս անոնց մտքէն պիտի չելնէ: Եւ դարձեալ, փոխանակ թերեւս ապարդիւն՝ բայց ստուգիւ ձանձրացուցիչ կերպով սահմանելու ծովեզերքները, հրուանդանները, նեղուցները, եւ այլն, ձեր աշակերտներուն հետ փոխադրուեցէք ջուրի մը եզերքը, եւ հոն բաժով մը շինեցէք եւ բնական ձեւով ցոյց տուէք անոնց ա'յն առարկաները զորս ծանօթացնել կ'ուզէք: Եթէ ընթերցանութեան դասի մը մէջ հանդիպիք այնպիսի բառերու որոց նշանակութիւնը չեն գիտեր ուսանողք, օրինակի համար, ծաղիկի մը մասերուն վրայ խօսուած ատեն, երբ պսակ, բաժակ, իզայ, որձայ բառերուն պատահիք, տղայոց խնդրած բացատրութիւնը վերապահեցէք պարտէզին մէջ զբօսանքի պահուն, կամ դաշտերուն մէջ պտոյտի մը փամուռն, եւ հոն ծաղիկներ ցոյց տուէք անոնց եւ իրականին վրայ բացատրեցէք այդ բառերուն նշանակութիւնը: Այսպէս պէտք է ընել ամէն ուսումնական համար ալ ըստ կարգին:


Անցողակի ըսենք թէ այս դրութիւնն է որ էապէս կը կազմէ ինչ որ Բեսդալուցի* կը

*ԵԱՆՕԹ.— Զուիցերիացի հռչակաւոր մանկավարժ որ աղբատ տղայոց դաստիարակութեան ու կրթութեան միջոցները բարելոցելու մտօք իր կատարած աշխատութիւններով տիեզերական համբաւ մը ստացաւ (1764—1827): Դէժ յանդիման ուսուցման, այսինքն նիւթական առարկաներու վրայ ուսուցանելու դրութեան մեծ հեղինակն է:

կոչէր եւ դեռ մանկավարժութեան մէջ կը կոչուի դէմյանդիմանութիւն (intuition. այս բառը կը նշանակէ տեսնել), վասն զի այս դրութիւնն անմիջապէս եւ որոշապէս կը ծանօթացնէ մեզ նիւթեղէն առարկաները, մեր զգայարանքներուն եւ գլխաւորաբար տեսողութեան զգայարանքին վրայ ըրած տպաւորութեամբ:

Շար.

Մ.



ԲՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԿԻՆՐ

Ն Ր Ղ

Ե

(Շար. ԻԲ ԹԻԼԷՆ)



ԲԿԻՆՔ Լ'երկիր մէկ պատանքով ծածկուած...
Գնոջ հոգին ովկէանին պէս բարձրասաց,
Մոայնքով կը պաշարեն լուծեան մէջ,
Եղովկ... խոկար հէջն՝ բնութեան խորն
յարաշէջ:

Առուակներու մեղմադժիկ արեւին,
Կը ներշնչուէր կնոջ սիրտը հրեղէն.
Կոհակներու ծայրերուն մէջ նշմարէր,
Անտառներու ու երկինքի նկարներ.
Ալիքները բոլր մ'են արդէն գաղտնիքի,
Կարծես Բնութիւնն ինքնին այն տեղ կը յանգի.
Գնոջ խորհուրդներն հոն նկարուին ամպի պէս,
Ուր՝ Արշալոյս ու Վերջալոյսն հրագէս,
Իրենց փափկիկ մարմինները կը սուզեն,
Աստղիկի մը հեշտ փառքերովն հողեղէն.
Հոն իր առջեւ լուներու վեհ նայուածքներ,
Միռեն լոյսի գորգն ու կերպասն կենսաբեր.
Աւազ, կինն այն դարերու ծոց մը խորձած,
Մոռցաւ երկնի ճառագայթներն սիրայրեաց,
Մոռցաւ ջուրին ու ցամաքին ձառքը վսեմ,
Մոռցաւ քաղցր երգն թռչուններու երկնամեմ.
Երազանքի ծովափին վրայ տատանէր,
Ահա՛ ինկաւ... ա'յդ վրձին մէջ մահաստուեր.
Երկիրն՝ տըխուր ողբերգակ մ'էր ու կուլւոր...
Այդ անուրջի աշխարհին մէջ դալկահար,

երկինքն՝ լռին աւերակ մ'էր սեւ ւ'անծիր,
Այդ հէք կընոջ աչքին առջեւ սո'սկ դանդիւ...
Յոռեւտեսի մը խոկումներն յուզէին,
Թըշուառին գանկն պէս զիշերուան մըռայլին.
Հո'ն Սէրն ու ֆառք փոխուին մըռայլ աւերի,
Ուր՝ Ապագան հառաչքի մէջ պիտ' մարի...
Յոյսը՝ մոխիր կը դառնար հոն ո'չ աստղ հուր,
Անցեալն անէծք մ'ըլլար այն տեղ մահուան քոյր,
Անոր հոգին ու մէին սիրտն հընչէին,
Մահուան քընարն նոճիներէն՝ տըխրագին,
Երկինքն արցունք կ'անծրեւէր հոն ո'չ անծրեւ,
Երկիրն եղերգ ձօնէր մարդուն ո'չ տերեւ,
Մարմանդի տեղ հառաչք կուտար թըշուառին,
Աղբիւրի տեղ արցունք քըղխէր տըրտմագին,
Ո'հ, ամէն տարր ծնէր զիշեր մը տըխուր,
Իր էութիւնն անգամ կարծէր մռայլ՝ լուռ...
Իր մըտքին մէջ աստղերն ու ծովն վարսագեղ,
Խաւարակուռ դանդիւ մ'ըլլան զերդ հեղեղ՝
Ո'ւր մարդերու դիակն թաղեն ու կուլան,
Անհունութեան տառապանքովն անըման.
Ահա՛ Կինն այդ ա'յս սոսկումով կ'երագէր,
Առուակներու եզերքն հակած զերդ եւեր.
Ըսծախեցաւ... մոռցած էր նա՛ թատրն այն սեւ,
Ա'հ, ըսկըսաւ սքանչանալ արդարեւ,
Արեգակի պալատին վրայ ոսկեղէն,
Ա'լ ցընորքներն կուտային խոյս իր մըտքէն,
Ա'լ վիշտերը զըտնէին վիհ լոյսի մէջ,
Զի վիշտերու վիհը լոյսն է լուռ ւ'անշէջ,
Ուրիկէ ծնին երջանկութիւնն ու Անհուն,
Ա'յս մարդկութեան խեղանքն մահաբուն...
Երբ արթննար լաւատեսի պէս խորհէր,
Այլ երբեմն ցորեկ ատեն իբր ստուեր,
Անդոհական երագներու դաշտին մէջ
Կը դեզերէր ոգիի մը հանգոյն պերճ.
Զարմանալի նկարագրի տէր էր այն,
Մե'րթ կ'արտասուէր մօտ փառքերուն Բընութեան,
Մե'րթ կը հեզնէր Բընութիւնը հրաշակերտ,
Կարծելով զայն շիւղ մ'աննըշան կամ սեւ կէտ.
Վայրենի չէր, որ անցեալ մը վերյիշէր,
Նիւթի ծնունդն էր առաջին կենսաբեր.
Նա Սուրբ Գրքի երգած եւան էր խաբուած,
Այն օձակերպ սատանայէն մընութեանց,
Որ դեռ այն ինչ հոգի ծոցէն երկնուած էր,
Վայրկենապէս չերկնեց զայն հոգն կեանքի տէր,
Եղաշըքումն է անոր Հայր Աստուածն մեծ,
Զոր դարերէ ի վեր դարձնէր վըշտահեծ,
Վառ Բընութեան դարձնոցին մէջ մըշտընջեան
Ուրիկէ՛ հանուր արարածնե'րը ծընան.
Երբ երկրագունդն ծնաւ բանաւոր էակներն,
Անոնք սկզբան՝ հրէշի պէս մահաբեր,
Իրար կ'պած կ'ընթանային լեռնէ լեռ,
Ծովէ ի ծով, դաշտէ ի դաշտ ապալեր,
Ո'հ, միասին կը դիտէին Տիեզերքն,
Որուն լոյսերն կոհակի պէս էին մերկ.
Լուռ զիշերուան աստղերն՝ գանձերն դիտէին,

Ա'յդ հեշտ զուգեակ ամոնները մեր երկրին.
Հիմալայան լոյսի դիւթիչ պալատ մ'էր,
Հո'ն աստղերը սաւառնէին իբր ըստուեր.
Հոն հեղեղներն երագի պէս կը յորդեն,
Հո'ն Բնութիւնն երկնից մարդը հողեղէն,
Ահա՛ երկեակ հրաշակերտներն ա'յս նիւթին,
Հիանային անոնց վըրայ խընդագին.
— Աստուածաշունչն կ'ըսէ կընոջ մէկ կողէն,
Ստեղծեց այն Եհովան այն լուսեղէն.
Ճշմարտութիւն մ'է սա ինքնին ընդհանուր,
Երբ «կող»ի տեղ ըսենք «կողմ»էն մենք այլուր.
Նիւթի շարժումը դարաւոր ու լըռիւն,
Բաժնեց գանտնք տալով տըռփանք մեր սըրտին.
Անմեղութեան զահոյքն էր ծովն ու ցամաք,
Երբ այն ու կին իրար կըցուած իբր խարակ.
Տիեզերքի անհուն վըհին տակ սուղամծ,
Կը խոկային ու ժըպտէին անծկայրեաց.
Համայն Բնութիւնն անմեղութիւն կը բուրէր,
Կարծե'ս աշխարհ ծագիկ մ'էր վսեմ կենսաբեր.
Ովկէանոսն ու երկինքը բարձրաթիւ,
Ճշմարտութեան կայսերութեանն էին ծիր.
Այժմու ոճրով լըլի զիշերն այն ատեն,
Արդարութեամբ էր յղի մրայն զոր ատեն
Եղեռնագործն ու յելուգակն արիւնքուշտ,
Որոնք երկիրն ըրին դըժոխք նախծիրով կուշտ.
Ա'հ, այն ատեն Սէրն էր մի ծով զինջ՝ խաղաղ,
Ուր՝ երկինքը տեղար մարգրիտ՝ շող ու շաղ,
Կոհակներէն ողբի ծայն մ'իսկ չը լըսեց,
Աստղերու բոյն հետ պարեխին գոռ ու մեծ.
Այն ծալ ի ծալ ծալի ու վսեմ վիհերէն,
Միայն մէկ երգ լըսէր Բնութիւնն համօրէն,
Ճշմարտութիւնն էր այդ երգը գեղեցիկ,
Յուզող լեռներն ու երկինքը երկնող սիւք.
Հո'ն սիրահարն արցունք մ'անգամ թափած չէր,
Աստղերուն տակ որք են ծագիկ բուրող «սէր»,
Ծովափներէն թըռչուններն այն տարմատարմ,
Հազար տեսակ երգ ձօնէին սըրտին թարմ.
Տիեզերքը՝ Երանութիւնն էր ինքնին,
Ո'չ թէ արդի թըշուառութիւնն անքնին.
Առաջին մարդն չուներ յանցանք դրախտին մէջ,
Զոր մենք երկիր կ'անուանենք յար մահաշէջ.
Այդ յանցանքը եղաշըքման պէ'տը է տալ,
Որ զայնս բաժնեց միութենէն Երանեւ.

(Շար.)

ՄԻՀՐԱՆ ԹԱՊԱԳԵԱՆ

Տ Ա Ս Ն Ո Ց Ը

ԱՌԱՌՈՏՈՒՆ սովորականէն շատ կանուխ արթնցաւ Նարդուհին, թէեւ գիշերը ժամը 7ին կրցած էր պառկել առջի իրիկունէն իր հեւացող հիւանդ զաւկին սնարին մօտիկ :

Ուխտ ըրած էր այն , մայրական ջերմիկ հաւատքի ուխտ մը , իր սրտահատոր հիւանդ Զարեհի բժշկութեան համար երթալ մոմիկ մը վառել Տիրամօր պատկերին առջեւ :

Օրուան անհրաժեշտ համեստ ծախքէն տասնոց մը միայն կրցած էր աւելցնել . վաղն առաւօտ առաւ զայն թաշկինակի ծայրի ծրարին մէջէն , ու խաչակնքելով՝ տունէն դուրս ելաւ , մինչ Զարեհ գիշերուան կրած տագնապներէն կարծես պարտասած՝ մրափ մը կ'առնէր մշիկ մշիկ :

Դեռ եկեղեցւոյ կոչնակին առաջին ձայնը վաղայարոյց հաւատացեալները չհրաւիրած՝ Նարդուհին արդէն հասած էր սրբավայրին բակը , ուր ծերուկ բանկալապէս քթին տակէն իր առաւօտեան աղօթքը կը մուտար , աչուըները սրբելով : Բարեպաշտիկ ուխտաւորուհին մօտեցաւ բանկալին , և ծերունին անմիջապէս սկսաւ շտկել շտկրտել մօմեքու շարքն ու դէզերը՝ շարունակելով միանգամայն իր անհասկնալի աղօթքը : Բայց տասնոցը կ'ուշանար , և Նարդուհին զայն ո՛ր գրպանին մէջ դրած ըլլալը մոռցած , կը փնտռէր , կը պրպտէր պատառատուն սեւ շրջագետին ներքին երկու գրպանները , Առաջին գրպանին մէջէն գտաւ թղթի կտորիկ մը միայն որ իր զաւկին դեղագիրն էր . հապճեպ միւս գրպանը տարաւ ձեռքը , բանկալապետը չսպասցնելու փութկոտութեամբ , բայց աւա՛ղ , տասնոցը ինկած էր... և ի՞նչպէս . այն պահուն երբ Նարդուհին իր տնակէն դուրս կ'ելնէր , տամուկ աչքերը սրբելու համար թաշկինակը գրպանէն դուրս հանած ատեն , տասնոցն ալ մէկտեղ դուրս սպրդած ու ինկա՛ծ էր սեւ մութին մէջ :

— Տիկին , ըսաւ բանկալապետը , ա՛յնքան մեծ բան մըն է տալիքնիդ որ իրարանցումի մէջ էք :

Խեղճ կինը բառ միտի չկրցաւ արտասանել . ցուրտ սարսուռ մը անցաւ գլխէն , ու հոն մնաց պահիկ մը արձանացած , շուարած ու չլմորուն :

Տասնոցը ինկա՛ծ էր . դատարկ էր Նարդուհին ձեռքն ու գրպանն ալ . ի՞նչ ըսէր բանկալապետին եւ ի՞նչպէս ներկայանար Աստուածամօր պատկերին առջեւ : Մոմը ծերունիին ձեռքը մնաց . Նարդուհին ձեռքն ալ իր դատարկ գրպանին մէջ :

— Գնա՛ , գնա՛ , ըսաւ բարի ծերունին , հոգ չէ՛ , ներս մտիւ , աղօթքդ ըրէ՛ :

Այս ձայնը Զարեհի մօրկան համար երկնային ձայն մը եղաւ , որ յանկարծ իր յուզեալ վիճակէն սթափած՝ իր զոդդոջուն քայլերն ուղղեց դէպի եկեղեցւոյ ներքին գաւիթը , բայց դատարկ էր ձեռքը , առանց մոմի ու նուէրի կը ներկայանար Տիրամօր առջեւ՝ յանցաւորի մը պէս : Նարդուհին անմիջապէս ծնրադրեց , պարապ ձեռքը վեր բարձրացուց , նոյնպէս արցունքով լիցուած աչքերը , ու սկսաւ աղօթել՝ ինչպէս կ'աղօթեն ուխտաւոր մայրեր , որոնք Աստուածամօր առջեւ մսէն աւելի սիրտ , մարմնէն աւելի ջիղ ու ոսկորէն աւելի հոգի կը կարին . այնպէս էր և Նարդուհին . ի՞նչ փոյթ էր իրեն՝ եթէ ձեռքերն ունայն ու գրպանները դատարկ էին . նա՛ տասնոցին տեղ սրտին գանձատունը բացաւ , մրմնջեց աղօթքներու է՛ն հոգեբուխն ու սրտառուչը :

Եւ ի՞նչ կրնան ունենալ աղքատներն ու այրիները իբր նուէր : Նարդուհին այն դժբաղդ այրիներէն էր , որոնք ծաղիկ հասակի մէջ կորսնցնելով իրենց ամուսինները , յոյսերին միմիայն իրենց սեփական ուժին ու բազուկին վրայ կը դնեն , որով հազար ու մէկ տառապանքներով , հալումաջ վիճակով կ'աշխատին լուիկ մնջիկ , ապրելու ու ապրեցնելու համար իրենց զաւակները :

Հաւատքն ու համբերութիւնն ալ մեծ դեր կը կատարեն այսպիսիներու խորտակումած կեանքին, խոցուած սրտին ու տրտում հոգիներուն մէջ :

Ու Նարդուհին համար, Աստուծոյ աահարին, Տիրամօր պատկերին իբր նուէր եթէ տասնոցը կը պակսէր, բայց անսպառ գանձ մը կար իր հոգւոյն խորքը, հաւատքն էր այն. եթէ չունէր մոմագին ու իւղագին, իր տաք արցունքները կային, արցունքներ՝ որոնց իւրաքանչիւր ջինջ կայլակին մէջէն կը ցոլանան հաւատացելոց մաքուր ու անրիժ հոգիները :

Այրի Նարդուհին չունէր եղաւ իր զաւկին փրկութեան համար տասնոցին տեղ հոգեմորմունջ աղօթք մը և Աստուածամօր պատկերը լուսազարդող կանթեղին մէջ իւղի տեղ իր մայրական տաք արցունքները :

ՍՍԱՆԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ



ԻՍԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

“ՀԱՆՐԱԳԻՏԱԿ”, ի

Դ Ի Ռ Ի Թ Ի Ի Ն

ԴՐՈՒԹԻՒՆ ԲԱՌԸ յոյն սիստեմա բառին թարգմանութիւնն է: Այս յոյն բառն ալ բաղադրեալ է սիս (կից կամ միասին) և իստեմա կամ դիստեմա (դէնել) բառերէն: Յրանսական լեզուն սոյն բառն իւրացնելով կոչած է système: Գրագիտութիւնն կը նշանակէ շատ բաներու մէջ ամբողջի մը վերածումը, միացումը: Իրարու հետ շրջայորէն կապուած ստոյգ ու ճշմարիտ կամ սուտ ու սխալ սկզբունքներու, նախադասութիւններու, գաղափարներու, մտածումներու միացումը կամ համախմբումը, հաստատելու, յօրինելու համար վարդապետութիւն մը, ո՛չ միայն փիլիսոփայութեան, այլև ուրիշ ամէն գիտութեանց մէջ: Ասոր համար է որ կ'ըսենք ու կ'որոշենք՝ փիլիսոփայութեան մէջ՝ Պլատոնի, Արիստոտէլի, Տէքարդի, Պագոնի, Լէն.ի դրութիւնները. Աստեղագիտութեան մէջ Կոպերնիկի, Նետոնի, Լէն.ի

դրութիւնները: Այս իմաստով է որ Հոլպախ ալ կոչած է Ռնուքեան դրութիւնը (système de nature) ա՛յն գիրքը, որ պարզած, յիշատակած է նիւթապաշտութեան և անաստուածութեան իր ամբարիշտ ու ապականարար առածները: Դրութիւն բառը կը գործածուի ապա թէ՛ մեր ծանօթութեանց կամ գաղափարաց համար և թէ՛ մեր ծանօթութեանց առարկաներուն համար միանգամայն: Այս բառն շատ անգամ ալ գէշ մտքով կը գործածուի, և կը նշանակէ անհիմն, անիմաստ առարկութեանց, թերի մտածմանց և թիւր կարծեաց կարգ մը, որոնց համեմատ կ'ուզեն մեկնել բնութեան ընթացքը: Հիները՝ որք աւելի ենթադրութեամբ ու գուշակութեամբ քան փորձառութեամբ ու դիտողութեամբ կը վարուէին, փիլիսոփայութեան, աստեղագիտութեան ու բժշկութեան մէջ շինեցին ա՛յնպիսի դրութիւններ, որ իրարու դէմ կը մարտնչէին և զիրար կը կործանէին: Այս գիտութեանց պատմութիւնները շատ լաւ ի վեր կը հանեն այս կարգի դրութիւնները և կը ծանօթացնեն անոնց տխուր ու ցաւալի կողմերը:

Գոնտիլեագ հրատարակած է Դրութեանց Դիրք մը (traité des systèmes) որուն մէջ լիովին ցուցուցած, բացատրած է մտքի այս կերպ խաղերուն պատճառներն ու վտանգները:

Դրութիւն ըսելով կը հասկնանք նաեւ միութիւն մը մասերու որք զիրար կը բաղադրեն, մէկզմէկ կ'ամբողջացնեն և իրարմէ կախումն ունին, ըլլան ատոնք բնութեան գործ, ինչպէս Ասխարհից դրութիւնը (système du monde), Մոլորակային դրութիւնը (système planétaire), Լեռաց դրութիւնը, ևլն. ըլլան մարդկային գործ, ինչպէս մեդրական Դրութիւնը, աստանդակաց Դրութիւնը: Սոյն իմաստով կը կոչուին նաեւ այն մասերը, որոնք մեքենայ մը կամ ճարտարարուեստական գործիք մը կազմելու կը ծառայեն:

Անդամագնութեան մէջ Դրութիւն կը կոչուի նոյն հիւսկերէ բաղադրուած և նման պաշտօններ կատարելու համար սահմանուած գործարաններու ամբողջութիւնը՝ այս մտքով է որ կ'ըսենք ջղային, գեղձային, ոսկրային, դնդերային ևլն. դրութիւն: Բնական պատմութեան մէջ դրութիւն կը կոչուի բնութեան էակները բաժնելու, զանոնք դասակարգելու կերպ մը: Դրութիւնը տարբեր է Մեթոքէն սա՝ պատճառաւ որ առաջինը սակաւաթիւ հանգամանքներու վրայ հիմնուած արուեստական կարգ մ'է, ինչպէս Լինէէի բուսաբանական դրութիւնը, ինչդեռ մեթոք բնութեան էակներուն իրական առնչութեանց ամբողջութիւնն ունի իրեն տեսակէտ:

Փիլիսոփայական դրութիւնները թէև ըստ երեւութին շատ և պէսպէս են, սակայն կըրնանք ամենքն ալ վերածել քանի մը ընդհանուր տիպերու կամ դպրոցներու, որոնց կը պատահինք պատմութեան ամէն շրջաններու կամ թուականներու մէջ, եւ որք կը բարդաւածին, կը ձեւափոխուին և երբեմն ալ իրարու հետ կը խառնուին առանց երբեք հիմնովին փոփոխուելու:

Տրամաբանօրէն՝ երեք գլխաւոր դրութիւն կայ. այն որ Բանին (raison) հեղինակութիւնը և գիտութեան հնարաւորութիւնը կ'ընդունի. այսինքն վարդապետականութիւնը (dogmatisme), այն՝ որ կ'ուրանայ

այս երկուքն ալ կամ Սկեպտիկանութիւնը, և այն՝ որ ճշմարտութիւնը Բանէն գերազանց կարողութեան մը մէջ կ'որոնէ կամ Խորհրդականութիւնը (Mysticisme):

Բնազանցօրէն՝ փիլիսոփայական դրութիւնները սապէս կը բաժնուին. Երկութիւն (dualisme), որ հոգին ու մարմինը կը համարի իբրեւ յաւիտենական երկու սկզբունքներ և իրարու ալ շատ կարեւոր. Նիւթապաշտութիւն որ նիւթը կը ճանչնայ իբրեւ սկիզբն իրաց. Գաղափարականութիւն (idéalisme) որ հոգւոյն կամ մտածման միայն կը հաւատայ. Համասուսութիւն (panthéisme) որուն համար նիւթն ու միտքը, մարմիններն ու հոգիները ստորոգելիներ, ձեւեր, կամ միակ սկզբունքի մը մասնաւոր տեսիլներն են. վերջապէս Ոգեկանութիւն, որ կ'ընդունի մտքին մէջ ոչ միայն մտածումը, գաղափարները, այլ նաեւ ազդու, ազատ, անձնական զօրութիւն մը որ ստեղծած է նիւթն ու աշխարհը: Վերջապէս՝ բարոյականի մէջ՝ այս դրութիւններէն ոմանք իբրեւ կանոն ուրիշ բան չեն ընդունիր եթէ ոչ շահը կամ հաճոյքը, այսինքն զգայարանաց ձայնը. այս դրութեան հետեւողք կը կոչուին Նպիկուրեանք, Ոմանք ալ՝ միայն Բանը, պարտք, և ատոնք ալ Սոյիկեանքն են, Կան ալ որ իրենց դաւանանք ունին զգացումն ու սէրը, որոյ բարձրագոյն բացատրութիւնն է Խորհրդականութիւնը:

Բաժանմանց կերպերն առաջ տանելով՝ ուրիշ շատ աւելի ընդհանուր տիպեր ալ կ'ունենանք, վասն զի ամէն դրութիւն կը վերաբերի կամ զգայարանաց, կամ զգացմանց, կամ բանին, կամ վերջապէս գիտակցութեան, որ իր մէջ կը պարունակէ հոգեկան ուրիշ բոլոր կարողութիւնները և կ'իյնէ անոնց. Զգայարանք կուտան մեզ նիւթապաշտութիւնը, Զգայականութիւնը, Եպիկուրեանութիւնը, Սկեպտիկանութիւնը. Զգացումը կուտայ մեզ Խորհրդականութիւնը: Բանը կ'առաջնորդէ մեզ դէպի Գաղափարականութիւնն ու Համասուսութիւն:

Գիտակցութեան փիլիսոփայութիւնն է ճշմարիտը, որ հոգեբանութեան մէջ կը վաւերացնէ ազատութեան գաղափարը, բնազանցութեան մէջ արարչագործութեան գաղափարը, և բարոյականին մէջ կը միացնէ պարտքը զգացման հետ:

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ձնուած բուրբէ քաղաքի տակաւնք. — Ի-
տեալ տակաւնք եւ բուրբի դարձ՝ սպասելով
ոսկեդարուն. — Շաքար եւ անոյժ՝ կտոր մը ա-
ծուխի մէջ. — Արուեստական վանիլակը լաւա-
գոյն է քան ճամարիք. — Ուրիշք եւ Մ. Գոր-
նիք. — Գորնք եւ ծխող դոգոցներ. — Թաւու-
րակին ազդեցութիւնը փոկներուն վրայ եւ
լանքերնային ներգործութիւնը՝ կապիկներուն
վրայ. — Նուագամուտ շուներ եւ սարդեր. —
Մեր ստորին եղբայրներուն գեղագիտութիւնը :

Այն բազմաթիւ ու այլազան կերտու-
թեանց մէջ, որոնց կ'ենթարկուի ճշուած
թուղթը, կրնանք յիշել թուղթէ ձողերը,
անիւները, հեծանիւի շրջանակները, Բայց
նորագոյն եւ ոչ նուազ հետաքրքրաշարժ կի-
րառութիւնն է թուղթէ տակաւններու շի-
նութիւնը : Վերջերս Տիւնքէրք ժամանած է
քարիւղի ամբողջ բեռ մը : Արտասովոր բան
մը չկայ, պիտի մտածէք, այս գործին մէջ,
բայց եթէ ըսեմ որ քարիւղը թղթեայ ա-
մաններու մէջ տակաւնորոշուած էր, պիտի
ընդունէք անշուշտ թէ տնտեսական
ամբողջ յեղաշրջում մը կայ ատոր մէջ : Ըն-
դունարաններու այս նոր սեռին առաւելու-
թիւնք արդարեւ բազմաթիւ են. բաց-
արձակ անկիզբութիւն, թեթեւութիւն,
ամրապինդ հաստատութիւն, եւ ամէն բա-
նէ վեր, մզելու բացարձակ անկարելիու-
թիւն, ինչ որ կը բառնայ ամէն հոսում,
հեղուկի կորուստ, հրդեհի վտանգ : Ահա ու-
րեմն իտեալ տակաւնք, որոյ մէջ Ֆրանսայի
կամ Կախէթու հին գինին պիտի կրնայ դա-
րերով մնալ առանց մզլոտելու եւ մզելու
վտանգի : Քարի, երկաթի, պղինձի դարէն
ետք, ահա՛ թուղթի դարը, սպասելով ոսկի
դարո՛ւն, ... եթէ Եոհաննէսպուրիի ոսկե-
հանքերն օդն հանելու Պօէրական պողոտա-
խօսութիւնն օդը չհանէ հանքային թուղ-
թերն ալ, համարժէ՛ք ոսկեայ :

* * *

Այն բոլոր զարմանալի բաներէն վերջ,
զորս տարրալոյծք կամ բնագէտք յաջողե-

ցան հանել գետնածուխէն, — ինչ որ ներկա-
րարութեան արուեստին վերածնութեան
պատճառ եղաւ, — այն հիւթեղ, համով
հոտով քաղցրաւենիներու եւ գերա-
նուրբ շաքարիկներու շինութենէն վերջ,
որոնց կեղեւն ալ, մարմինն ալ, անուշն ալ,
գոյնն ալ, հոտն ալ կտոր մը սովորական,
գոհհիկ ածուխէն առնուած էին, բազմիցս
խնդիր եղած է թէ ամէն անուշահոտու-
թիւն, ամէն գոյն, ամէն իսկութիւն կարելի
չէ՞ շինել ածուխով : Բայց գործարանական
բնաշուծութեան յաղթանակն է անշուշտ
արուեստական վանիլակին պատրաստու-
թիւնը : Ամէն ոք համէն ու հոտէն կը ճանչ-
նայ վանիլակը, որոյ գաղտնածածուկ կամ
զգուշիկ բոյրն ընտանեկան սերապուրներու
(ֆեմա) անբաժան զուարթութիւնն է : Է՛հ,
այս համետ բոյսն այլեւս չեն քաղեր, չեն
կիւեր, բայց եթէ չնչին քանակութեամբ, զի
թորանոցէն (իմպիֆ) սերած վանիլակն աւելի
աժան է և աւելի համ ունի քան ճամարիք,
իրակա՛նք : Ուստի, շաքարաւաճառները,
ծաղարարները բնութեան պատրաստած ա-
նուշիկ բոյսը չեն գործածեր այլեւս, կամ
խիստ քիչ կը գործածեն, և նախապատ-
ուութիւն կուտան բնալոյծներու պատրաս-
տածին :

Ո՛վ երեկոյեան սիւք, ո՛վ Պրագիլիտան
ափանց խնկաւէտ սղոխ, ի՞նչ ե-
ղած էք : Ձեր տեղն յաջորդած է ալիքիլի
մեղիլքօֆօֆաքիլիք. .. ո՛ւժ : Տարրաւածու-
թիւնը միայն կրնայ այսպիսի խաղեր խա-
ղալ ողջմտութեան : Կ'ուզէ՞ք գիտնալ, ըն-
թերցողք, եւ դուք սիրելի ընթերցողու-
հիք, թէ ի՞նչպէս կը պատրաստուի այս
հիւթը, որոյ անունը դժուարահունչ, բայց
համա ախորժելի է : Շատ մը եղանակներ
կան, որոնց մէջ ամէնէն պարզն է ալքոլով
զտել վարսակին վեճեկը որ շատ ճոխ է
վանիլակի բոյրով : Ի՞նչ զուարթարար է
այս եղանակը. — Երբ երեկոյթի մը ներկայ
գտնուիք և ճաշակէք այն հիւթեղ կամակ-
ներէն որք երեկոյթներու մէջ կ'երեւին
յաճախ, դո՛նէ պիտի խորհիք մեր բարե-
կամ ձիերուն վրայ, որոնց վանիլակ կը
հրամցունենք ամէն օր վարսակ գոհհիկ ան-
ուան տակ : Բայց սպասեցէք, հոս չի վեր-

ջանար, վասն զի արդի տարրաբանութեան մէջ բան մը կանգ չառնէր: Վանիլայի ուրիշ նոր ու առատ աղբիւր մ'ալ գտնուած է: Անակակալ բան, սունկի (liège, խիցի մանթար) փոշիին մէջ ալ գոյութիւն ունի եղեր վանիլակը: Փոշիացած և ծծմբաթթուի եռացման ենթարկուած սունկն անուշաբոյր միացորդ մը կը թողու, որ վանիլակի իսկութիւնն է, եւ լաւագո՞յն տեսակէն: Ա՛հ, ո՞րչափ պանծալի է այս դարուն մէջ ապրիլ, ուր շնորհիւ գիտութեան յառաջդիմութեանց, շիշերու անհամար խցանները, մարդասպան խցաններն մինչեւ սրտին խորը ծակուած, մզլտած, մաշած, հիւծած, կտոր կտոր եղած, վիրաւորուած սունկերը մէկ քանի ըոպէի մէջ կերպարանափոխ կ'ըլլան բուրումնաւէտ իսկութիւն մը կը դառնան:

* * *

Որփէոս, իր քնարին դաշն շեշտերով, քովը կը յանկուցանէր անտառներուն ամէնէն վայրագ բնակիչները: Գէթ առասպելն այսպէս կ'ըսէ մեզ: Բրիտանական Հանդէսին մէջ, Մր. Քորնիշ, ընտանի ու վայրենի անասնոց զգացումները կը վերլուծէ և մեր ուշադրութիւնը կը հրաւիրէ սա՛ իրողութեան վրայ թէ գեղեցկութեան ըմբռնումը, զարդերու, անուշահոտութիւններու եւ երաժշտութեան ճաշակը բազմաթիւ անասուններու սեփական յատկութիւնք են: Նախ Բաբուասիի մէջ կայ պարսիկական-թուշուր, որ իր բոյնը, կամ ընտանիքը պատսպարելու համար կառուցած պէրուն տնակը կը զարդարէ յաճախ շատ մը սիրուն գեղորներով (bibelot), — փետուրներ, խեցիներ, մետաղի և կերպասի կտորներ ևլն: — Թուշունին համար, այս բոլոր առարկաները կը լրացնեն գեղազիտական պէտքեր, զորս իր դրացին, վայրի մարդը, դեռ զգալու չափ չէ յառաջացած: Մեզմէ ամէն ոք կրցած է հաստատել որիններու, անծեղներու, ագռաւներու ճաշակը՝ ամէն փայլուն առարկաներու համար, ճաշակ որ այդ դժբաղդ թուշուններուն վաստկացած է երբեմն աննախանձելի համբաւ մը, որոյ ամէնէն յատկանշականն է Գոդ Անծեղին զրոյցը: Անուշահոտութիւն-

ներն ևս, զորս Մր. Քորնիշ կիրարկած է իր փորձերուն մէջ, մանաւանդ հուսամի (լավանտա) ջուրը, շատ ախորժանօք ճաշակուած են շատ մը անասուններէ: Կենդանաբանական պարտէզին առիւծները, վագրները, ընձառիւծները զգալի հաճոյք մը կը յայտնէին երբ անոնց գարշահոտ վանդակներուն մէջ կը ներմուծէր հուսամի ջուրով ոռոգուած բոյր-քսակներ (sachet): Կը տեսնուէր որ այդ գազանները երեսներ կը շփէին անոնց, և աչքերնին կիսափակ, հեշտօրէն կը շնչէին անոնց բոյրերը: Զուկերը, իմացականութեան սանդուխին ստորին աստիճանին վրայ դրուած այդ անասունները, անուշ հոտերը կ'ընկու փորձութեան չէն դիմանար: Կարթով որսացողները վատութեամբ չարաչար կը գործածեն այս փորձութիւնը, անոնց տալով այնպիսի կերեր որոնց շնորհիւ, անոնց ընել սխտի տան մեծ ոստումը անծանօթին մէջ, և... տապալկին ալ մէջ:

Կան սակայն անասուններ որք չեն կրնար հոտոտել ամենադոյզն բոյրն իսկ, ո՛րքան ալ անուշըլլայ, առանց իրենց զգուանքն յայտնելու: Զրադուէս մը՝ որու հուսամի բոյր հոտոտել տուած էին, ա՛յնքան զգուանք զգաց որ իսկոյն ջուրին մէջ մխրճեցաւ եւ այլևս երեւան չեղաւ: Ծաշակի սահմանին մէջ, ունինք ամերիկեան գորտն ու դօդօշը որք սիկառ կը ծխեն ճիշդ իրենց մեծ եղբօր՝ մարդուն պէս:

Եթէ ճաշակի և հոտոտելիքի զգայաբանքներէն անցնինք յսելիքին, Որփէոսի փորձը կրկնելով, ոչ նուազ զարմանալի արդիւնքներ կը տեսնենք, և Մր. Քորնիշ անփոյթ չէ գտնուած իր անասունները ենթարկելու ամէն ծանօթ նուազածութեանց: Արդէն գիտէինք թէ թուշուններն ու սողուններն, ի մէջ այլոց, համ կ'առնէին երաժշտութենէ: Զին, պատերազմի ձին եւ կրկէսի ձին մանաւանդ, անզգայ չէ երաժշտութեան: Սարդը նուազամոլ մ'է, ամէն ոք գիտէ դայս, շունն ալ այնպէս է, կը յիշուի ոչխարներու հօտ մը, որ հաճութեամբ կը հետեւէր տկճորի մը և ջութակի մը ձայնին, կը յառաջանար այդ նուազաբաններուն ձայնով, եւ այն ատեն կանգ

կ'առնէր երբ անոնք դադրէին նուագելէ :

Այժմերը շատ կ'ախորժին հովուական սր-
րինդին ձայնէն , և ի լուր անոր՝ զուարթո-
րէն կը խայտան ու կը կայտռեն : Փոկերը
մասնաւոր ճաշակ մը ունին թաւջու-
թակին համար , գէթ այսպէս կը պնդէ նա-
ւապետ մը , Մ. Լանսի , հաստատելով թէ
Սրբյալէրկ գտնուած ատեն , այս շահեկան
երկակենցաղներէն բազմաթիւ ունկնդիրներ
իր նաւուն կը հետեւէին միշտ , երբ նաւուն
մէջ թաւջութակ կը զարնուէր : Ասոր հա-
կառակ , նուագածութիւնն ընդհանրապէս
սարսափի ճշմարիտ զգացում մը յառաջ կը
բերէ մեծ գազաններուն վրայ , ինչպէս ա-
ռիւծ , արջ , վագր , գայլ և շնագայլ : Ոչ-
խաղները , ինչպէս կը յուսացուէր , շատ
կ'ախորժին ա'յն ձայներէն որք սար-
սափահար կ'ընեն հէք գայլերը : Կապիկ մը
կը կատղի երբ աններդաշնակ ձայն մը լսէ ,
և մարդ սարսուռ կ'զգայ խորհելով թէ այդ
սիրելի անասուններն ո՞րքան պիտի վշտա-
կրէին եթէ լանքիռնա ածող բալիւստայի մը
նուագածութեան նշաւակ ըլլային :

Մը. Բորնիլի եզրակացութիւնը սա է թէ
ընդհանրապէս ջութակն ու սրինգն են որ
ամէնէն հաճելի տպաւորութիւնները յա-
ռաջ կը բերեն անասուններուն վրայ : Մեր
եզրակացութիւնն ալ սա է թէ յանդուգն
անիրաւութիւն մը կ'ըլլար ժխտել թէ ա-
նասուններն , այս ստորին եզրայրները , բո-
լորովին զուրկ եղած ըլլան գեղազիտական
բանաւոր զգացումէ մը :

ՔՐԻՍՏԱՆՈՅՇ

ՄՕՐՍ ԱՐՑՈՒՆՔԸ

Թէ գորշ ամպեր բաշածիգ ,
Ծածկեն կապոյտն երկնիին ,
Ծածկի հոգոյս եւ երկինք
Սեւ խոհերով սրտագին :

Թե երբ անձրեւ կ'ափսոսի ,
Վերն ամպերէն հողմաւար ,
Յիշեմ յուզմամբ ցաւագին ,
Արցունքն իմ մօր վշտահար :

Թե ծովն հանկ մորիկներ ,
Ցայտէ փրփուրն ալեակին ,
Հոգիս առնու սաւսուռներ...
'Ի յուշ իմ մօր արցունքին :

Սիրեմ արցունքն իմ մօրկան ,
Արցունքն սիրոյ կարօտի ,
Զի այն մասդաշ մանկական
Ցօղն եղած է իմ կեանքի :

Շատ եմ տեսն արցունքոյ ,
Լճակ աչեր երկնագոյն ,
Զե' , չեն նման իմ գրոտ
Արցունքին մօրս աչերուն :

Սերն անհո՞ւն է մայրիկին ,
Արցունքը ծով մ'անյասակ .
Մայրերը մեր այս կեանքին
Եւ սիրոյ սուրբ հրեշտակ :

1898

ՍՈՍԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ



ԱՐԵՒԱՄՈՒՏ



ՈՒՐՈՒՆՆԵՐ՝ ծիծաղ ծովուն ծոց կապոյս ,
Սեւեռաբիք յոյս աշխարհներ վեհափառ ,
Հո՛ւն կը դիտեմ կոհակներու հեւքն անփոյս ,
Սի՛ւքն է , կուլա՛յ ջուրերուն վրայ թեւապար :

Ճառագայթներ հուր ցոյցերով մարմնրուն ,
Ժանեակներու վրայ կը փրոշուին շուսափոյս .
Նուրք նըւագներ ես կը լըսեմ շա՛ս հեռուն ,
Մոյրահե՛տ՝ ծիծաղ ծովուն ծոց կապոյս :

Կը մաղուին մուայ մութ ստուերներն ալ վերին ,
Մըշուշներո՛ւ մէջ փաթարած յուլաբար .
Ալեծածան՝ կոյսեր չորս դիս կը պարեն՝
Սեւեռաբիք՝ յոյս աշխարհներ վեհափառ :

Կը հեծկըլսա՛ն հովեր քախծոս , քրքրո՛ւն ,
Համբոյրներու գիրգ հեշտանք անծածկոյս .
Ու կը նուաղին յոյժ շանջին վրայ ջրերուն ,
Հո՛ւն կը դիտեմ կոհակներու հեւքն անփոյս :

Մի՛սքս յըղի՝ խորհուրդներով տեղայոյց ,
Խորն ալիերուն կը թեւածի՝ վայրապար ,
Օրհասական արեւ կ'ըլլայ խորատոյց ,
Սի՛ւքն է , կուլա՛յ ջուրերուն վրայ թեւապար :

Տարեցի

ՄԿՏԻՉ Ա. ԹՈՒՐԵԱՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ԱՐՄԱՏԱՆՈՐ ԿԱՄ ԽԼՆԱՆՈՐ ԲՈՅՍԵՐ

Plantes—racines et tubercules

Այն բոյսերն որոնց արմատները կամ
խլուկները (tubercules) կ'ուտուին , հետեւե-
լալներն են . Գետնախնձոր (pomme de
terre) , ձակնդեղ (bettrave , բաննար) ,
ստեպղին (carotte) , դազար (panais) , շոգ-
դամ (navet) , գոնգեղ (chou-navet) և գետ-
նատանձ (topinambour , եր կլմար) : Այս
բոլոր բոյսերը մեծաքանակ կը մշակուին

մարդոց եւ անասուններու սննդեան հա-
մար , և չորս արգասաւորիչ տալիները (ա-
ղօղ , ասիտ ֆոսֆորիք , չօ , բողաս) լիա-
պէս պարունակող փխրուն հող մը կը
պահանջեն : Հողին պատաստութիւնը
մեծ կարեւորութիւն ունի արմատ—բոյ-
սերուն մշակութեան համար , Պէտք է ըզ-
դուշանալ կոպճուտ հողերու մէջ մշակել ,
որք կ'արգելեն անոնց աճումը : Հողը խո-
րունկ հերկելու է , որպէս զի բոյսերուն ար-
մատները դիւրաւ կարենան մխուիլ հողին
մէջ : Ուստի երկու անգամ պէտք է հեր-
կել , մին՝ աշնան , այնպիսի կերպով մը որ

հողը ձմեռը փշրի, եւ երկրորդը՝ դարնան, սերմանումէն կամ խլունկներուն տնկարկու-մէն առաջ:

Գեսնախնձոր.— Գետնախնձորը խոտային ցողունով բոյս մ'է, որոյ արմատները կը զարդարուին խլունկներով կամ մսոտ ու-ռոյցներով, որոնք ուտելի են: Գետնախն-ձորը կը տնկուի Ապրիլին, գարնանային հերկումէն ետք: Պէտք է կարգ կարգ տըն-կել իրարմէ 0.50 կամ 0.60 ունդիմէդը բա-ցութեամբ: Երբ իրարու շատ մօտ տնկուին, խլունկները փոխադարձաբար կ'արգիլեն ի-րենց աճումը: Բոյսերուն տակը մէկ քանի անգամ կակղեցնելէ վերջ, հողով կը պա-տեն արմատները: Այս աշխատութիւնք կը ջնջեն մոլաբոյսերը, հողը կը կակղեն կը քրքրեն, եւ կը դիւրացնեն խլման գործը, որ աշնան կը կատարուի Սեպտ.ի մէջ:

Գետնախնձորը ծանր հիւանդութեան մը ենթակայ է երբեմն: Մանրադիտական սունկ մը (*peronospora instans*) նախ կը յարձակի տերեւներուն եւ ցողունին վրայ, յետոյ կը մտնէ մինչեւ խլունկին մէջ եւ անոր փտե-լուն պատճառ կ'ըլլայ: Այդ հիւանդութեան դէմ կռուելու համար փորձուած բոլոր միջոց-ներուն մէջ ամէնէն ազդեցիկն է գետնախն-ձորին տերեւներուն վրայ սփռել փոշիացած պղինձի ծծմբատ (*sulfate de cuivre*) եւ կամ *bouillie bordelaise* որ պղինձի ծծմբատի, կիրի եւ ջուրի խառնուրդ մ'է, զոր պէտք է տերեւներուն վրայ որսկել ձարձափէջով (*pul-vérisateur ցնցուղ*) մը: Գետնախնձորի տե-սակները բազմաթիւ են: Լաւագոյններուն մէջէն կրնանք յիշել դեղին հոլանցականը, կարմիր հոլանցականը, *carrson*, վիօլեդ սը Բառի, մառժօլէն, Ռիքքրս իմբերադօր Էլն: Վերջինը շատ արգասաբեր է:

Ճակնդեղ.— Ճակնդեղը, որուն գաւառա-ցիք քակ ալ կ'ըսեն, խոշոր ու մսոտ արմատ մը ունի, որոյ մէջտեղէն դուրս կ'ելնէ լայն ու փալլուն տերեւներու փունջ մը: Ճակն-դեղը կրնայ նկատուիլ բանջարեղէն կամ աղցանի յատուկ բոյս մը, ինչպէս նաեւ շա-քարեբեր բոյս մը կամ ճարակաբոյս մը: Իբրեւ բանջարեղէն, երկրորդական կա-րեւորութիւն մը ունի միայն: Մէկ քանի

տեսակներ, ինչպէս կարմիրը կամ *crapau- dine*, կ'ուտուին մսխիւր տակ եփելով կամ աղցան պատրաստելով: Շաքարի չինու-թեան սահմանուած տեսակները ճերմակ կ'ըլլան: Սիլեզիոյ ճերմակ ճակնդեղը շա-քարաբեր ճակնդեղին տիպարն է: Ֆրան-սացի հողագէտ մը, Վիլմօրէն, գտած է այն-պիսի տեսակներ որք մեծաքանակ շաքար կուտան:

Իբրեւ ճարակաբոյս, ճակնդեղը երկրա-գործական մեծ արժէք ունի: Ձմեռնային ընտիր սնունդ մ'է արջառներուն համար, թէ՛ առանձին եւ թէ՛ յարդի հետ խառ-նուելով: Արջառներու սնունդին համար մը-շակուած տեսակներն են *mammouth*, *avoide des Barres*, *corne-de-boeuf*, *globe jaune* եւլն: Իբր ճարակաբոյս ծառայող տեսակները կը պարունակեն մեծաքանակ ազոդաւոր եւ հանքային նիւթեր, որք այն-քան անհրաժեշտ են արջառներու սնունդին: Իբրեւ ճարակաբոյս ծառայող ճակնդեղին եւ շաքարաբեր ճակնդեղին մշակութեանց միջեւ մեծ տարբերութիւն մը կայ: Առաջին պարագային մէջ, որովհետեւ մեծաքանակ սնուցիչ արդիւնք ձեռք բերել կ'ուզուի, հողին լիակատար աղբ պիտի տրուի, պայ-մանաւ որ ազոդն առաւելակշիռ ըլլայ, եւ մէկ քառ. մէդրին վրայ 6 տունկէն աւելի պէտք չէ տնկել, որպէս զի ամենքն ալ կա-րենան զարգանալ: Իսկ երկրորդ պարագա-յին մէջ, շատ չափաւոր պէտք է գործածել ազոդաւոր աղբերը, որովհետեւ կ'արգիլեն շաքարին կազմութիւնը, եւ ընդհակառակն բոգասաւոր աղբեր պէտք է տալ հողին, որք շաքարային արտադրութեան կ'օգնեն, եւ տասն ճակնդեղ պէտք է թողուլ մէն մի քառ. մէդրի վրայ: Իսկ մշակութեան հա-մար տրուելիք խնամքները երկու տեսակին համար ալ նոյն են: Ապրիլի սկիզբը ցան-ուելու է կարգ կարգ եւ յետոյ, միջոց մի-ջոց, երեք անգամ կրկնաբորելու է: Երկ-րորդ անգամու, իրարմէ զատելու է չափա-զանց սեղմուած տունկերը: Ճակնդեղը կրնայ պահուիլ գետնափոր շտեմարաններու մէջ:

Սեպղին.— Ստեպղինը հովանոցաւորնե-րու (*ombellifère*) ընտանիքէն երկամեան

տունն ի մէջ : Բաղմաթիւ տեսակներ ունի , որոնց ամենքն ալ երկու դասակարգի կը բաժնուին . իբրեւ բանջարեղէն ծառայող եւ իբրեւ ճարակարոյս ծառայող : Իբրեւ բանջարեղէն ծառայող տեսակները աւելի համով են , բայց նուազ արդիւնաբեր : Պէտք է զիտել թէ ստեպղիններու յատկութիւնը տեսակէն կախում չունի , նոյնքան եւ աւելի կախում ունի հողին բնութենէն : Ստեպղինը նուազ խտտապահանջ է քան ճակնդեղը , բայց երաշտութենէն կը վախնայ : Իրենց արմատին համար մշակուած բոլոր տունկերուն պէս , կակուղ ու փխրուն հող մը կը խնդրէ , որպէս զի չընդդիմանայ իր ազատ զարգացման : Կրային հողերու մէջ շատ լաւ կը յաջողի , բայց խորունկ պէտք է հերկել , որովհետեւ խլիկաւոր բոյսերուն մէջ ճակնդեղն է միայն որոյ արմատները շատ խորունկ կը մխուին հողին մէջ :

Ճարակարոյսի տեղ ծառայող միւս արմատ-բոյսերը , ճակնդեղին հետ նոյն մշակութիւնը կը պահանջեն Գազարը (panais , եսպան հավուճու) շատ կը նմանի ստեպղինին : Շողգամը , գոնդեղը (chou-navet) , բողկաղամբը (chou-rave) կաղամբներու խաչածաղիկ մեծ ընտանիքին պէսպիսութիւններն են : Այս բոլոր արմատաւոր բոյսերը գարնան կը ցանուին խնամով հերկուած ու աղբուած հողերու մէջ :

Գեօնասանձ .— Գետնատանձը (եէր էլմասը) երկարակեաց տունկ մ'է , բայց ցողունը , որ երբեմն 2 մէդր բարձրութեան կը հասնի , միամեայ է : Տերեւները լայն ու ժանեկաձեւ են : Ծաղիկը կը նմանի սովորական արեւածաղիկներու ծաղիկին , թէ՛ գոյնով եւ թէ՛ ձեւով : Գետնատանձին արմատները , գետնախնձորին պէս , խլուկներով կամ ուռոյցներով կը բեռնաւորուին : Եւ արդէն այս խլուկներուն համար է որ կը մշակեն այս բոյսը , թէպէտեւ տերեւն ալ կրնայ իբրեւ ճարակարոյս ծառայել , բայց չոր վիճակի մէջ : Ամէն հողերն ալ , ամէնէն անջրդիններն իսկ , կը յարմարին այս բոյսին մշակութեան : Ընդհանրապէս գարնան կը տնկուի : Պէտք է կրկնաբար եւ քաղաքան ընել , բայց անօգուտ է հողով

ծածկել արմատը : Զուրի մէջ կամ մոխրի տակ եփուած գետնատանձն արհամարհելի անունդ մը չէ , և անոր համը կը յիշեցնէ կանկարին համը : Արջառներու ալ կը տրուի աւելի եփած քան հում : Ոչխարները , խոզերը եւ կովերը , երբ վարժուած են անոր , անյազարար կ'ուտեն : Գետնատանձն ուրիշ արմատներու վրայ ահապին առաւելութիւն մը ունի . իր խլուկները չեն վախնար սառնամանիքէն , այնպէս որ գետնափոր շտեմարաններու մէջ պահուելու պէտք չունին : Կրնան հողին մէջ թաղուած մնալ և պէտք եղած ատենը միայն քաղուիլ : Էքզառ գլուխ միջին բերքն է 60,000 քիլո : Այս բոյսին միակ անպատեհութիւնը սա՛ է որ դժուարին է անոր վերեւումը արգիլել իրեն յաջորդող մշակութեանց մէջ , վասն զի ամէնէն փոքր խլուկներն , հողին մէջ թողուած ամինամանր արմատները , կը բաւեն նորէն յառաջ բերելու նոր ցողուններ :

ՀԱՐՑԱՐԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲՈՅՍԵՐ

Եւր .

Բ . Պ .

Ծ Ի Ծ Ա Ղ

Դասիարակը .— Այո՛ , զաւակներս , բարինները երկինք պիտի երթան , իսկ չարերը՝ դժոխք : Ստախօսները , գողերը , սուտ երդում ընողները , կռուարարները , անձնասէրները , չար նախանձոտները պիտի երթան չարչարանաց վայր մը : Ինչո՞ւ համար կուլաս , Կարպիս , դուն միշտ խօլեք ես , սիրելիս , դժոխք երթալու վախ մը չունիս : Կարպիս .— Բա՛ջ գիտեմ թէ պիտի չերթամ , պարոն , բայց բոլոր ընկերներս պիտի երթան եւ ես միս մինակ պիտի մնամ :

* * *

— Տիկին , ձեր ամուսինն օդի զոհ մ'եղած կը թուի ինձ :

— Օ՛հ , ո՛չ , զոհը ես եմ . ինք օդիէն շատ գոհ է :

* * *

Տիկին Բ*.— Ուրեմն գթութեան գո՞րծ ո՞րքայսօր, մեր ամուսնութեան 15րդ տարեդարձին առթիւ :

Պարոն Բ*.— Այո՛, խմբագիրներէս մին ամսաթոշակի յաւելում մը կը խնդրէր, վասն զի ամուսնանալ կ'ուզէր, եւ ես զլացայ այդ յաւելումը :

* * *

Նոր ամուսնացող մը . — Կը փափաքէի գիտնալ թէ կինս ի՞նչ կը խորհի իմ վրաս :

Հին ամուսնացող մը . — Օ՛հ . դուրին է գիտնալ այդ . անգամ մը սխալմամբ իր գլխարկին վրայ նստէ՛, եւ մէկ ըոպէի մէջ քեզ պիտի ըսէ ինչ որ կը խորհի վրադ :

* * *

— Աներկբայ ես որ իր բոլոր մտածութիւնները քեզ համար են :

— Օ՛հ, անշուշտ, եւ ատոր համար չէ՞ որ իր համարակալի պաշտօնը կորսնցուց :

* * *

Անմիտ պճնասէր մը, ինչպէս են իր բոլոր նմանները, օր մը ըսաւ կնոջ մը .

— Տիկին, մե՛ղք որ հասակիդ կարճութիւնը կ'անչքացնէ հրապոյրներդ :

— Գալով քեզ, փութաց պատասխանել տիկինն արդարապէս սրտմտած, դուն ալ կը նմանիս բաղմայարկ տան մը որուն ամէնէն վերի սենեակը միշտ ամէնէն գէշ կահաւորուածն է :

* * *

Յելուգակ մը . — Կա՛մ քսակդ և կա՛մ կեանքդ :

Ուղեւորը (փաստաբան) . — Ա՛ռ ինչ որ ունիմ :

Յելուգակը . — Խո՛յս տուր հիմա :

Ուղեւորը . — (աւազակին օձիքէն լռնելով) Ըսէ՛ տեսնեմ, սիրելիս, փաստաբանի մը պէտք պիտի չունենա՞ս զքեզ պաշտպանելու, եթէ երբեք ձերբակալուիս այս դործին համար :

* * *

Ուսուցիչը . — Տեսա՞ծ էք երբեք փղի մորթ մը :

Աւակերտը . — Անշուշտ, տէր իմ :

Ուսուցիչը . — Ո՞ւր տեսած էք, տղաս :

Աւակերտը . — Փղի մը վրայ, տէր իմ :

* * *

Անցեալ օր երկու բարեկամներ փողոցէն իմիսին կ'երթային, երբ յանկարծ էջ մը իրենց դէմը ելաւ եւ սկսաւ ղռալ, հեւալ, հազալ ողբալի կերպով :

Իյս էջն ալ ո՞րքան հարբուխ եղեր է, ըսաւ երկու բարեկամներէն մին :

— Աղէկ միտքս ինկաւ, պատասխանեց միւսը, ի՞նչպէս եղաւ ձեր հազը :

* * *

Այրի կին մը ապահովագրական ընկերութեան մը գրասենեակը գնաց, իր հանգուցեալ ամուսնոյն կենաց ապահովագրութեան գումարն ստանալու համար :

Խօսակցութեան միջոցին, գրագիրը քաղաքավարական պարտք համարեց իրեն համակրութեամբ ըսել կնոջ թէ շատ կը ցաւէր որ իր ամուսինը մեռած էր, Բայց շատ զարմացաւ երբ կինն յանկարծ պատասխանեց թթու ձայնով մը .

— Դուք, այր մարդիկդ ամենքդ ալ մէկ ջուրէ էք . միշտ ցաւ կ'զգաք երբ հէք կին մը քիչ մը դրամ գանձելու բաղդաւորութիւնը կ'ունենայ :

ԱԶԴ

— Մեր գաւառաբնակ Պատ. բաժանորդներէն կը խնդրենք որ հանին փութացնել մեզ իրենց վեցամսեայ բաժանորդագինը, նկատելով որ «Հանրագիտակ»ի Նոր քրջանին Ա. վեցամսեան լրանալու համար հազիւ 4 տարիներ մնացած են : — Փոք գումարներու համար կ'ընդունուի քղթասարական դրոմ, հարկին հարիւր դր. ի հաշուով :

Արսօնաք . — ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ԳՐՊԱՆԻ ԲԱՌԳՐԻՈՅԿ

ՖՐԱՆՍԱՀԱՅ

Գին 5 Ղրու

800 փոքրագույն երեսներէ բաղկացած սիրուն գրքոյկ մը, որ 13—14,000 բառերու ու ուրու եւ ընտանեկան ասացումներու հաւաքոյթ մ'է եւ ֆրանսերէն ուսանողներու անբաժան ընկերը: Գնեցե՛ք մէկ մէկ օրինակ եւ ձեր զակէին ձեռքը տուէ՛ք, վստահ ըլլալով որ այդ գրքոյկ պիտի սրէ անոր ուսման փափաքը: 10 օրինակ մէկէն առնողին 30 առ 100 զեղչ: Դիմեցե՛ք միայն Հանրագիտակի Տնօրէնութեան:

ՆԻՈՒ ՀՈՄ

ԱՄԵՐԻԿԱՆ ՄԻԱԿ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆ

Ուսարուքի՛ն վաճառասան մարտիկ



Որ կը մըցի բոլոր կարի մե-
քնաներուն հետ

Իր պարզութեամբ

Տոկունութեամբ

Արագութեամբ

Թեթեւութեամբ

Աժանութեամբ

Թուրքիոյ միակ ներկայացուցիչ
ՅՈՎՀ. Կ. ՄԻԱՆԵՍԱՆ

Կեդրոնացեղի. — Սիրքէճի, Բէօրբիւլի
խան, Թիւ 3:

Մասնաճիւղ. — Դալաթիա, Պէօյիւք Միւ-
լէթ խան, Թիւ 33:

Գնողներու համար վճարման ամէն տե-
սակ դիւրութիւններ:

Հրատարակութիւն Բիւզանդ Մ. Պօզանեանի

ԳՐԱՅԵԱՆ ԳՐԵՐ

- | | |
|---|---------------|
| 1. Տեո. եւ Գործնական Բերականութիւն
աշխարհիկ լեզուի, տարրական ընթացք
80 էրես | Գին
2 Ղր2: |
| 2. Տեո. եւ Գործ. Բերականութիւն աշ-
խարհիկ լեզուի, միջին եւ բարձրա-
դաս ընթացք, 208 էրես | 4 » |
| 3. Ֆրանս. նոր քերական | 1 կէս » |
| 4. Բերականութիւն Ֆրանս. լեզուի | 7 » |
| 5. Էքօ ալ Բառի [200 էրես բառարանով] | 10 » |
| 6. Գրպանի Բառգրքոյի Ֆրանսահայ | 5 » |
| 7. Պատկերադարձ աշխարհագրութիւն | 4 » |

- | | |
|---|--------|
| 8. Սաղմոս Խոշորագիր, կիսակաշի [անգղիշ] | 2 կէս |
| 9. Ինքնապաշտպանութիւն գիշական,
գաղղիական եւ միջանցարորբային
այտերու դէմ | 6 Ղր2: |
| 10. Օսմ. Բաղ: Օրինագիրք 5 հատոր | 50 » |

ԶԵՂԶ 300/0

Այս բոլոր գրքերուն համար դիմել Հանրագի-
տակի Տնօրէնութեան:

ԿԱՌԵԻՈՐ ԱԶԴ. — Հանրագիտակի կողքին երեք էջերը ծանուցմանց յատ-
կացուած են: Անոնք որ կը հաճին մէկ տարեկան բաժանորդագրուիլ, կրնան
իրենց ծանուցումները ՁՐԻ հրատարակել տալ, 10 ական տող, 5 անգամուան
համար. իսկ 50 տող մէկ անգամուան համար:

Բաժանորդագրութիւնք կ'ընդունուին, եռամսեայ, վեցամսեայ եւ տարեկան:

ԻՍԹԸՐՆ ԳԱՌԻՆԹԻՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ընդդեմ հրդեհի ի «ՀԸԼԼ»

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Ֆր. 3,250,000

ԱԼԼԷԱՆՁՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց եւ արկածից ի «ՃԷՆՈՎԱ»

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Ֆր. 83,455,645

Ընկերութեանց Դրամասունքն է «Քրէտի Լիօնէ»,

ՌԷՆԱՆ—ՎԵՍԹՖԱԼԻԷՆ

ՄՈՎԱՑԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ի Կլապալիս

Դրամագլուխ եւ Պահեստ Ֆր. 6,250,000

ԳՐԱՍԵՆԵԱԿ.— Ստամպուլ, Հաճօքուլօ Խան, Թիւ 53, 54, 55, 56

Լիպօր Ներկայացուցիչ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ



ՌՕՍԻԱ — ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՂ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին

34,775,642 ֆրանք

Երաշխաւորութեան գումար

121,765,333 »

1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած

164,172,000 »

Կեդրոնացեղի, Բարափին վրայ, Մախասան հին տեղը

Ընդհ. Բննիչ
Ա. ՀԻՒՐՄԻՒՋ

Ընդհ. Դորժակալ
ԹԷՌՏՈՐ ՌԷՐԲԷՆ

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

Հանրագիտակի վերաբերեալ ամէն գուրծին պէտք է ուղղել Նեան Պերպերեան
սպարանը, Էսփ զապթիյէ մասսէսի քիւ 61, առ Տնօրէնութիւն
եւ Խմբագրութիւն «Հանրագիտակ»ի

